

իրարմով, եւ հասարակութիւնը աւելի հետաքրքիր դէպի իր գրականութիւնը:

Իսկ բանաստեղծը, որ մեր այսօրուան Ասուլիսին նիւթը կը կազմէ, Դանիէլ Վարուժանն է: Յայտնատես *մարգարե* մը որ ցեղին սիրտը կը բանայ, քնացած մոխիրները կը քրքրէ եւ նոր փիւնիկներ կ'աւետէ, ու *թռչուն* մը որ իր թեւերը բացած կը թռչի ու կ'երգէ հերարձակ իր հեթանոսական երգերը: Ու այս երկու անուններուն քով աւելցնենք նաեւ իր լքած մականունն ալ, Չպոքքեար, այսինքն *արունստագետը*⁶:

Բայց թողունք որ նախ ինք խօսի իր կեանքի մասին⁷.–

«Օ՛նաժ եմ 1884ին Սեբաստիոյ մօտ Բրքնիկ գիւղը, ուր աճած է մանկութիւնս, ուռնիներուն տխուր հովանիներուն տակ երազկոտ, կամ գետեզերքներուն վրայ բաղեբուն քար նետելով անառակօրէն:

Դեռ հազիւ ես թիթեռնիկներ որսալու հասակիս մէջ՝ հայրս պանդխտած է Պոլիս, իսկ մայրս ձմեռնային երկար իրիկունները՝ թոնրատունը՝ նստած՝ երեւակայութիւնս օրօրած է Ենիչէրիներու եւ գայլերու պատմութիւններով, երբ Մէլլեգումի հովը կուգար բուխերիկին մէջ մերթ ոռնալ եւ մերթ դեի ձագի մը նման լալ:

Գիւղին դպրոցը հազիւ սկսած եմ ժամագիրքը կարդալ սորվիլ՝ զիս տարած են Պոլիս 1896ի կոտորածի օրերուն, ուր հայրս արեան սարսափին մէջ փնտռելէն յուսահատ՝ բանտին մէջ գտած եմ այն տխուր օրերուն սըտօրէն ամբաստանուած:

Երկու տարի յաճախած եմ Սագըզ Աղաճիի Մխիթարեան դպրոցը, յետոյ Քաղկեդոնի վարժարանը՝ ուր երկարատեն պատանեկութիւնս երազած է ընդմէջ Մօտայի ծովափին եւ Դուրեանի ոսկրներուն յիսկիւտար:

Արձակուրդներս ընդհանրապէս անցած են հօրս քով, Խավեար խանը, հայ պանդուխտներու հառաչանքներուն եւ վէրքերու տրոփիւնին ունկնդիր:

Հայր Արիստակէս Գասգանտիլեան՝ որ նոյն ատեն տեսուչ եղած է Քաղկեդոնի վարժարանին՝ առաջնորդած է